

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի աշակերտներ.

Դպրոցական վերամուտն արդեն անցած է մտատրապէս 2 ամիս, դասերն ու դպրոցական ծրագիրները բաական հունի մտած են, գրատորներ երբեմն-երբեմն կը կատարուին, որպէսզի դուք, ուսուցիչներն ու ծնողները տեսնէք, որ ինչպէս կ'ընթանայ ձեր ուսումնական ընթացքը: Մենք կը մաղթենք ձեզի ուսումնական յաջող տարեշրջան մը:



Նաեւ ձմեռը կը մտենայ, պէտք է լաւապէս պատրաստուի՞նք մեր երկրի ցուրտ ձմրան, ձիւնին եւ բուքին: Ամէնէն կարելորդ ձմեռնային լաւ հագուստներ, վերարկուներ, գուլպաներ, մոյկեր, գլխարկներ, ձեռնոցներ եւ վզնոցներ ապահովելն է, որովհետեւ անոնք կը պաշտպանեն մեր մարմինը ցուրտէն եւ հիւանդանալէն:

Ասոնց կողքին պէտք է լաւ սնունդ ստանանք, կենսանիւթերով լի, որոնք կը բարձրացնեն մարմնին դիմադրողականութիւնը եւ կը փրկեն մեզ ձմեռնային հիւանդութիւններէն, ինչպէս՝ հարբուխէն, կոիփէն, կոկորդի եւ ականջներու բորբոքումէն, եայլն:

Այս բոլորին կողքին մեր պարտականութիւնն է մտածել մեր նմաններուն մասին, յատկապէս մեր հայրենիքին մէջ ապրող երեխաներուն, որոնք Արցախէն տեղահանուեցան եւ տակաւին ծանր պայմաններու մէջ կ'ապրին: Դպրոցներն ու բարեսիրական միութիւնները անոնց օգնելու համար ծրագիրներ կը մշակեն, մենք ալ մասնակցինք այդ ծրագիրներուն, նոյնիսկ պզտիկ նպաստներով, որպէսզի անոնք առանձին չզգան իրենց դժբախտութեան մէջ:

ՏՕՆ Ս. ԹԱԴԵՈՍԻ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍԻ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ առաջին հիմնադիրները եղած են Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելները, որոնք կը կոչուին Հայաստանի առաջին Լուսատրիչները:

Ս. Թադէոս առաքել քրիստոնէութիւնը կը քարոզէ Կապադովկիոյ եւ Եդեսիոյ շրջաններուն մէջ, ուր 44 թուականին կը բժշկէ ու կը մկրտէ Աբգար թագաւորը: Այնուհետեւ, կը հասնի Արտազ գաւառի Շաւարշան գիւղաքաղաքը, ուր կարճ ժամանակի մէջ կ'ունենայ մեծ թիւով հետետորդներ, որոնց շարքին նաեւ հայոց Սանատրուկ արքայի 18-ամեայ դուստրը՝ Սանդուխտ կոյսը:

Երբ Սանատրուկ արքան կը տեղեկանայ այս մասին, բանտարկել կու տայ Սանդուխտ կոյսը եւ կը հրամայէ սրամահ ընել նորադարձները՝ իրենց քարոզիչին հետ:

Ըստ ավանդութեան, երբ Թադէոս առաքել սուրով կը սպաննուի, նոյն պահուն երկինքէն լոյս մը կը շողայ եւ ժայռ մը բացուելով, Սուրբին մարմինը ներս կ'առնէ:

Ս. Բարթողիմէոս առաքել քարոզութեան ճամբով կը հասնի Հայաստան եւ կը քարոզէ մտատրապէս 8 տարի՝ 60-էն 68 թուական: Ան իր քարոզութիւնը կը սկսի Սինեաց նահանգէն: Անոր քարոզութեան գլխաւոր վայրը կ'ըլլայ Գողթն գաւառը, ուր կը կառուցէ Տեառնընդառաջ եկեղեցին: Այնուհետեւ, Առաքելը կ'անցնի Արտաշատ քաղաք, ուր կը հանդիպի Թադէոս Առաքելին:

Աւելի ուշ, Ս. Բարթողիմէոս կ'երթայ Հեր եւ Զարեանդ գաւառները, կը մտնէ նաեւ Անձեւացեաց գաւառը, կը շրջի գանազան կողմեր եւ վերջապէս կը հասնի Աղբակ: Այնտեղ իրեն կը հանդիպի Ոգուհին՝ Սանատրուկ թագաւորի քոյրը, որ կը հաւատայ Քրիստոսի եւ կը հետեւի առաքելին: Թագաւորը առաքելը սպանութեան կը դատապարտէ՝ փշոտ քուքերու հարուածներով:



Ս. Բարթողիմէոս առաքելին անունով վանք մը գոյութիւն ունի Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ, ուր թաղուած է ան:

Հայաստանեայց եկեղեցին այս երկու առաքելներուն յիշատակը կը տօնէ Յիսնակի առաջին Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:


ՅԱԿՈՐ ՀՈՒԱՔԵԱՆ

Լեզուաբան, ուսուցիչ, գիրքերու հեղինակ եւ խմբագիր Յակոր Հոլաքեան ծնած է 1947-ին Քեսապի շրջանի Գարատուրան գիւղը: Յակոր Հոլաքեան նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, իսկ միջնակարգ ուսումը՝ Լիբանանի Այնճար գիւղին մէջ: Բարձրագոյն ուսումը ստացած է Երեւանի Պետական համալսարանի Հայ բանասիրութեան բաժանմունքէն ներս, ուրկէ շրջանաւարտ եղած է 1973-ին:



Յակոր Հոլաքեան

2002 թուականին արժանացած է Պատմական գիտութեանց թեկնածուի կոչման, իսկ 2016-ին՝ դոկտորի կոչման: 1973-էն մինչեւ 2014 Հոլաքեան ապրած եւ կրթական գործունէութիւն ծաւալած է Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Երկար տարիներ դասաւանդած է Հալէպի Քարէն Եփփէ Ազգային ճեմարանէն ներս, ինչպէս նաեւ դասախօսած է Հալէպի Համազգայինի Հայագիտական հիմնարկէն հիմնարկին մէջ:



2014 թուականին, Սուրիոյ պատերազմին պատճառաւ քեսապահայութիւնը տեղահանուելէ ետք, Հոլաքեան ընտանեօք տեղափոխուած է Երեւան, ուր սկսած է գործունէութիւն ծաւալել Հայաստանի Հանրապետութեան Գիտութեանց ազգային ակադեմիոյ մէջ՝ որպէս արեւմտահայերէնի մասնագէտ-հետազոտող, ինչպէս նաեւ Երեւանի Պետական համալսարանին մէջ՝ որպէս արեւմտահայերէնի դասախօս:

Հրատարակած է հատորներ Քեսապի մասին, որոնցմէ է Երեւանի մէջ հրատարակուած «Քեսապի երեք օրերը»՝ Քեսապի մէջ տեղի ունեցած հայաթափման մասին Սուրիոյ պատերազմի օրերուն:

Ունի հատորներ հայերէնի ուղղագրական կանոններուն մասին, ինչպէս նաեւ «Անդաստան» եւ «Հայերէնի դասագիրքս» դասագիրքերու շարքերը, որոնք մինչեւ օրս կը դասաւանդուին Սուրիոյ եւ Սփիւքի հայկական վարժարաններու մէջ:

ՔԱՄԻՆ

Յովհաննէս Թումանեան

— Ո՛ւ-նի-նի...
Քամին է, քամին,
Տես անզգամին.
Բերան չունի՝ փչում է,
Թեւեր չունի՝ թռչում է,
Ձեռքեր չունի՝ քաշում է,
Իմ փոքրիկին քշում է:

Կորի՛, դու քամի,
Անպիտան քամի:
Մի վախի, ջանիկ,
Փէշս պինդ բռնի,
Ես թող չեմ անի,
Քամին քեզ տանի:

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱ՛Ի

- Գետնափոփոխ լեզուն իր մարմնին չափ երկար կրնայ ըլլալ:
- Մեքսիքո քաղաքին տակէն կը հոսի 152,8 քմ. երկարութեամբ գետ մը:
- Ամէն տարի մօտաւորապէս 16 միլիոն փոթորիկներ տեղի կ'ունենան աշխարհի վրայ:
- Վագրին մարմնին աջ եւ ձախ կողմի գիծերը իրարմէ տարբեր են:
- Ռուսիա Ալասքայէն միայն 3,2 քմ. հեռու կը գտնուի:
- Շնածուկերը ոսկոր չունին:
- Կատունները քաղցր համերը չեն զգար:
- Երկրագունդին կորիզը մօտաւորապէս Հրատ մոլորակին մեծութիւնը ունի:
- Ամէն օր տեղի կ'ունենան հազարաւոր փոքր երկրաշարժներ:
- Վագր մը կրնայ մէկ անգամով աւելի քան 36 քիլօ միս ուտել:
- Մարդոց մեծ մասը իր կեանքէն մօտաւորապէս հինգ տարի կ'անցընէ ուտելով:
- Գետածին կրնայ մարդ արարածի մը չափ արագ վազել:

ԻՆՉՈ՞Ւ ԺԱՄԸ ԿԸ ՓՈԽԵՆՔ ԶՄԵՌՆԱՄՈՒՏԻՆ

Հոկտեմբերի վերջաւորութեան մենք մեր ժամացոյցները մէկ ժամ ետ կը տանինք: Ահա թէ ինչն է:

– Օրերը նուազ երկար են, աւելի շուտ կը մթննայ

Որովհետեւ երկրագունդը իր առանցքին վրայ հսկած է, հիստորիկ կիսագունդը 21 Յունիսէն սկսեալ ամէն օր աւելի քիչ ժամանակ լոյս կը ստանայ: Հոկտեմբերէն սկսեալ, կէսօրէ ետք արդէն կը մթննայ, մարդիկ լոյսերը շատ կանուխ կը վառեն եւ ելեկտրականութիւն աւելի կը սպառեն: Հետեալքար ժամերը կը փոխենք մեր կեանքի կշռոյթը բնական լուսաւորումին յարմարեցնելու եւ յատկապէս ուժանիւթի խնայողութիւն ընելու համար:


– Ձմեռնային ժամով մենք մէկ ժամ աւելի կը քնանանք

Առաջին գիշերը մենք մէկ ժամ քուն կը շահինք: Սակայն երբեմն մանուկները ժամի այս փոփոխութենէն կը խանգարուին, եւ անոնք քանի մը օրուան պէտք կ'ունենան այս նոր կշռոյթին վարժուելու համար:

Հանրային վայրերը, կայարաններն ու բջիջային գործիքները առողման ժամը երեքը կը սպասեն՝ բոլորը միասին իրենց ժամերը փոխելու համար, երթելի խանգարում չստեղծելու նպատակով:

– Գիտէ՞իր, թէ...

Արեւադարձային շրջաններու երկիրները ժամ չեն փոխեր, որովհետեւ անոնք կը գտնուին հասարակածին մօտ: Հոն ցերեկը եւ գիշերը միշտ նոյն տեսողութիւնը ունին:



Ա. – Հիստորիկ կիսագունդ, ցերեկը աւելի կարճ է, ձմեռ է:
Բ. – Հարաւային կիսագունդ, ցերեկը աւելի երկար է, ամառ է:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցական երաժշտութիւնը ունի շարականներ, հոգեւոր երգեր, մեղեդիներ եւ տաղեր: Անոնք եկեղեցական զանազան արարողութիւններու ընթացքին երգուած հոգեւոր երգեր են:

Հայ լեզուին մէջ շարական բառը մուտք գործած է 12-րդ դարուն, Ներսէս Շնորհալի Հայրապետին կողմէ, սակայն բազմաթիւ բանասէրներու համաձայն հայ շարականը սկիզբ առած է 5-րդ դարուն, գիրերու գիտէն ետք:

Մեզի հասած հնագոյն շարականները եղած են ապաշխարութեան նուիրուած շարականները, որոնք մեծամասնութեամբ վերագրուած են Ս. Մեսրոպ Մաշտոցին:

Ապաշխարութեան շարականները գրուած են պարզ ու յստակ լեզուով: Անոնք ունին նաեւ դիւրին եղանակներ եւ կ'երգուին Պահքի օրերուն: Այս շարականներէն քաղուած հատուածներով կը կազմուին այլ շարականներ եւ արօթքներ, որոնք կը ճոխացնեն եկեղեցական արարողութիւնները:



«Նոր Ծաղիկ» տաղին հեղինակն է Ներսէս Շնորհալի, 12-րդ դարուն, զոր կրնաք լսել հետեւելով այս հասցէին.


<https://www.youtube.com/watch?v=USyVBDXlbuo>

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՊԱՆԿԱՏԵՇ ԹԱՂԱՄԱՍԸ

Կը պատմուի, թէ Երեւանեան Հարաւ-արեւմտեան այս թաղամասը, երբ շահագործման յանձնուած է, նոյն օրը Պանկլատէշ ասիական պետութիւնը բաժնուած է Բաքիստանէն, հետեալքար թաղին մէջ բոլորը այս նորութեան մասին խօսած են եւ հեռուստացոյցով տեսած են անոր աւերակները: Այդ նկարները նմանցնելով թաղամասին, որ նոր կը կառուցուի եւ փոշոտ էր, թաղամասը կոչած են Պանկլատէշ:

Այստեղ առաջին բնակելի տունները եղած են հինգ յարկանի, որոնք կանգուն են մինչեւ այսօր, բայց ժամանակի ընթացքին կառուցուած են բարձր շէնքեր եւս:

Իրաքանչիւր շէնք ունի ցայտաղբիւր մը որ տարին 12 ամիս, նոյնիսկ սառույցներու մէջէն, խմելու ջուր կը հայթայթէ բնակիչներուն:



Թաղամասին մէջ կան Զօրավար Անդրանիկի արձանն ու Սուրբ Երրորդութիւն եկեղեցին:

Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ շինարարական աշխատանքները սկսած են 2001 թուականին եւ ավարտուած 2005-ին, անոր շրջանաձեւ կառուցուածքի հիմքը 7-րդ դարու Զուարթնոցի յայտնի տաճարն է:



Թաղամասին մէջ կը գտնուի նաեւ «Հայաստան» թատերասրահը, որուն քով կը գտնուին շատուանները: Անոնց կողքին կայ կանաչապատ այգին, ուր տեղադրուած են նշանատր մարդոց յուշարձաններն ու դիմանկարները:



Այստեղ կայ նաեւ հետաքրքրական զուգադիպութիւն մը. Պանկլատէշի բնակչութեան թիւն է 143 միլիոն. զարմանալի զուգադիպութեամբ մը Երեւանեան Պանկլատէշ թաղամասի բնակչութեան թիւն է 143 հազար:

«ՍՈՒՏ ՉԽՕՄԻԼ»

ԱՆԱՀԻՏ ՊԱԼԵԱՆ

Շատ լաւ բան է սիրուած ըլլալ:
 Սիրուած ըլլալ ընտանիքէդ:
 Սիրուած ըլլալ ընկերներէդ:
 Նաեւ սիրուիլ շրջապատէդ:
 Ո՛վ չի սիրեր «սիրուած ըլլալ»:
 Սիրուած ըլլալու համար
 Կարեւոր է ըլլալ ազնիւ ու օգնող,
 Կարեւոր է պարկեշտ ըլլալ, ոչ ստոր,
 Կարեւոր է սուտ չխօսիլ ու չխաբել:
 Երբ սիրուած ենք,
 Յարգուած ենք,
 Մարդոց վստահութիւնը կը վայելենք:
 Երբ կը ստենք
 Ու կը խաբենք
 Մենք մեզի կը վստասենք:
 Մարդոց մեզի հանդէպ ունեցած
 Վստահութիւնը կը կորսնցնենք:

Ստողին չեն հաւատար,
 Անոր ընկեր չեն դառնար:
 Ստախօսը չարախօս է,
 Ստելէ զատ կը վստասէ
 Ու սխալներ կը գործէ.
 Իր մէկ սուտը ծածկելու
 Նոր սուտ մըն է հանելու.
 Մինչ առաձը կ'ըսէ.
 «Սուտին պոչը կարճ է».
 Վաղ թէ ուշ, սուտը ինչ որ է
 Բացայայտուելու է:

Պարկեշտ ըլլանք,
 Ըսենք ճիշդը:
 Անկեղծ ըլլանք
 Ու չստենք
 Եւ միշտ պահենք
 Մեր խիղճը մաքուր,
 Մեր սիրտը մաքուր,
 Մեր հոգին մաքուր:



ԽՕՍՈՂ ԶՈՒԿԸ

Յովհաննէս Թումանեանի «Խօսող ձուկը» հեքիաթը չափազանց հետաքրքրական է: Ան կը պատմէ ձկնորսի մը աղքատ օգնականին պատմութիւնը, երբ ձկնորսը ձուկ մը կ'որսայ, իսկ աղքատ օգնականը կը խղճայ ձուկին եւ ետ ջուր կը նետէ զայն: Ձկնորսը բարկանալով կը վռնտէ իր աղքատ օգնականը:

Այսպիսով որսորդին այս օգնականը կը հանդիպի կարգ մը դժուարութիւններու, սակայն վերջապտութեան կը փրկուի իր ըրած բարիքին պատճառաւ:

Հեքիաթը կը սորվեցնէ, որ երբ բարիք կ'ընենք, անպայման անոր հատուցումը կը ստանանք օրին մէկը:

Հեքիաթին արեւմտահայերէնով պատմութիւնը կրնաք դիտել եւ կարդալ հետեւեալ հասցէով.

<https://poqrik.am/wp-content/uploads/2018/01/ynker.jpg>



ՆԻՍՏ ՈՒ ԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- 1.- Շնորհակալութիւն յայտնել: Մենք պէտք է սորվինք շնորհակալութիւն յայտնել. բան մը, որ յաճախ կը մոռնանք, բայց պէտք է սովորութիւն դարձնենք:
- 2.- Կարգի սպասել: Մենք պէտք է վարժուինք մեր կարգին սպասել, բոլոր կացութիւններուն մէջ: Պէտք է համբերել գիտնանք:
- 3.- Բարեւել: Յաճախ անձկուտ երեխաները կը մերժեն բարեւել: Մենք կրնանք օգնել մեր անձկուտ ընկերներուն, որպէսզի քաջալերուին եւ սորվին բարեւել:
- 4.- «Խնդրեմ» ըսել: Վարժուինք «կը խնդրեմ», եւ «հաճիս» ըսել փոխանակ «կ'ուզեմ» ըսելու:
- 5.- Մարգական ոգի ունենալ: Պէտք է սորվինք լաւ խաղալ, շահիլ, բայց նաեւ պէտք է ընդունինք պարտութիւնը: Պէտք է իմանանք, որ մենք աշխարհի կեդրոնը չենք, ենթադրուած չէ մնայուն ձեռով յաղթել, հետեւաբար պարտութիւնը ողբերգութեան վերածելը, կռուիլը, լալը սխալ հակազդեցութիւններ են:
- 6.- Ընդունիլ հաճոյախօսութիւնները: Երբ մէկը մեզի գովէ մեր լաւ արարքին համար, պէտք է «շնորհակալութիւն» յայտնենք խօսակիցին՝ փոխանակ «գիտեմ» ըսելու:
- 7.- Դուռը բռնել: Երբ սենեակ մը մտնենք, պէտք է սորվինք դուռը բանալէ ետք զայն բռնել, որպէսզի ետեւէն եկողները ես մտնեն:
- 8.- Տարբերութիւնները ընդունիլ: Պէտք է սորվինք մեզմէ տարբերները ընդունիլ եւ յարգել: Այսպէս, պէտք է բարեկամաբար վարուինք հաշմանդամներուն, կոյրներուն եւ համրերուն հետ:
- 9.- Կիսովի ուրիշին հետ: Պէտք է վարժուինք կարգ մը բաներ ուրիշին հետ բաժնեկցիլ, ինչպէս, օրինակ խաղալիքները: Եսակեդրոն ու անձնասէր երեխաները ապագային ընկերային լուրջ դժուարութիւններ կը դիմագրաւեն:
- 10.- Իմանալ սեղանի կանոնները: Պէտք է սորվինք բերանը գոց ուտել եւ ուտելու պահուն չխօսիլ:





ՍԱՆԹՈՒՐ

Բազմալար հարուածուող նուագարան: Հին պարսկերէնէն թարգմանաբար «սանթուր» բառը կը նշանակէ «հարիւր լար»:

Միջագետքեան սանթուրը ունէր յունական ընկուզենիի կեղեւէն պատրաստուած սեղանաձեւ իրան եւ պողպատեայ կամ պրոնզեայ 92 լար: Անոր կառուցուածքին մէջ կ'օգտագործուէին նաեւ քարեր եւ այծի աղիքներ:

Աւելի ուշ սանթուրը տարածուած է Անդրկովկասի, Մերձաւոր Արեւելքի եւ Միջին Արեւելքի մէջ: Այսպէս տարածուելով տարբեր երկիրներու մէջ, սանթուրը տարբեր ժողովուրդներու մօտ ենթարկուած է որոշ փոփոխութիւններու, կատարելագործուած ու զարգացած է:

Ան կը հանդիսանայ տաւիղին եւ քանոնին նախատեսակը:



Սանթուրը Հայաստանի մէջ գործածուած է շատ հին ժամանակներէն սկսեալ: 1900-ական թուականներուն օգտագործուած է աշուղական համոյթներուն: Որմէ ետք երկարատեւ ամենադասական հայկական սանթուրը մոռցուած էր:

Երաժշտագէտ Սեդրակ Երկանեան կը փափաքէր վերականգնել նուագարանին հայկական տարբերակը եւ կը դիմէ Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի նախարարութեան, որ արտօնութիւն կու տայ եւ կը ստանձնէ նուագարանին վերապատրաստման ծախսերը: Նուագարանը կը պատրաստէ վարպետ Ալպերթ Զաքարեանը:

Ներկայիս մասնագէտ սանթուրահարները նուագել կը սորվին Հայաստանի երաժշտանոցին ազգային նուագարաններու բաժինին մէջ եւ կը մասնակցին զանազան համոյթներու:

ԱՌԱԿ

ՁՈՒԿԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԹԱԳԱԻՈՐԸ
Մխիթար Գօշ


Օր մը ծուկերուն թագաւորը կը մեղադրէ ծուկերը եւ կ'ըսէ անոնց.

- Ինչո՞ւ կ'ուտէք ձեզմէ մանր ծուկերը:

Ձուկերը համարձակութիւն առնելով կը պատասխանեն.

- Որովհետեւ քեզմէ սորվեցանք, շատերը եկան քեզի երկրպագելու, բայց դուն յափշտակելով զանոնք կերար:

Առակս ցոյց կու տայ, որ ոչ թէ խօսքով, այլ գործով պէտք է խրատող ըլլանք:



Մխիթար Գօշ

ԳԻՆԻԻ ԽՅԱՆՆԵՐՈՎ
ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԹԱՂԱՐՆԵՐ

Քիչ մը ժամանակ տրամադրելով՝ կարելի է իրագործել այս շատ գեղեցիկ թաղարն ու ծաղկամանը, որոնց պատրաստութեան համար պէտք ունիք բաական մեծ թիով գինիի խցաններու, փակցնելիք գործիքի մը եւ անշուշտ բոյս՝ ըստ ճաշակի:



Նոյն սկզբունքէն մեկնելով՝ կարելի է պատրաստել գրասեղանի վրայ դրուող գրիչներու աման մը:

Ո՞Վ Կ'ՈՒՋԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Նոյեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 10 դեկտեմբեր 2024: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թողթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montréal, Canada
H4J 1L5

1.- «Խօսող ծուկը» հեքիաթը գրած է.

- Ա.- Յովհաննէս Թումանեան
- Բ.- Մխիթար Գօշ
- Գ.- Յակոբ Չոլաքեան

2.- Սեղանի կանոններէն մէկն է.

- Ա.- Խնդալով ուտել
- Բ.- Պատմութիւն պատմել
- Գ.- Չխօսիլ կերած ատեն

3.- «Ձուկերը եւ իրենց թագաւորը» առակը գրած է.

- Ա.- Յովհաննէս Թումանեան
- Բ.- Մխիթար Գօշ
- Գ.- Յակոբ Չոլաքեան

4.- Հայաստանի առաջին լուսաւորիչներն են.

- Ա.- Պօղոս եւ Պետրոս առաքեալները
- Բ.- Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալները
- Գ.- Յովհաննէս առաքեալը եւ Յուդան

5.- Սանթրուր նուագարանին հայկական տարբերակը պատրաստած է.

- Ա.- Երաժշտագէտ Սեդրակ Երկանեան
- Բ.- Արամ Խաչատուրեան
- Գ.- Վարպետ Ալպերթ Զաքարեան

6.- Պանկլատէշ թաղամասը կը գտնուի

- Ա.- Երեւանի մէջ
- Բ.- Գանատայի մէջ
- Գ.- Բաքիստանի մէջ

7.- Ձմեռնամուտին ժամերը կը փոխենք, որովհետեւ՝

- Ա.- Կ'ուզենք մէկ ժամ ավելի քնանալ:
- Բ.- Աւելի շուտ կը մթննայ:
- Գ.- Կ'ուզենք զանազանուիլ արեւադարձային շրջաններու երկիրներէն:

8.- Քարայծերը Հայաստանի մէջ կը տարածուին գլխաւորաբար

- Ա.- Երեւանի մէջ:
- Բ.- Սպիտակի մէջ:
- Գ.- Խոսրովի անտառներուն մէջ:

9.- Շարական բառը առաջին անգամ յիշուած է՝

- Ա.- Ներսէս Շնորհալիի կողմէ:
- Բ.- Առաքեալներուն կողմէ:
- Գ.- Դավիթ թագաւորին կողմէ:

10.-«Անդաստան» դասագիրքերու շարքին հեղինակն է.

- Ա.- Յովհաննէս Թումանեան
- Բ.- Մխիթար Գօշ
- Գ.- Յակոբ Չոլաքեան

ՎԻՇԱՊԻ ՊՏՈՒՂ



Վիշապի պտուղը, պիտայան կամ պիտահայան կ'աճի Ամերիկայի ցամաքամասին վրայ: Իրենց տեսքին համար կոչուած են վիշապի միոգ կամ փշոտ տանձ: Ներկայիս արդիւնաբերական կերպով կը մշակուին նաեւ Ասիոյ մէջ:

Պտուղը 150-600 կրամ կը կշռէ: Միջուկը կ'օգտագործուի սնունդի մէջ հում վիճակով, ունի քաղցր համ եւ շատ սննդարար է: Այս պտուղէն կարելի է պատրաստել հիւթ, գինի կամ օգտագործել այլ խմիչքներ պատրաստելու համար: Ծաղիկները նոյնպէս օգտագործելի են, որոնցմէ կը պատրաստուին թէյի տեսակներ:



Թէեւ վիշապի պտուղին սերմերը հարուստ են սննդանիւթերով, սակայն լաւ չձամելու պարագային կը դառնան դժուարամարս:

Վիշապի պտուղին միջուկը կը պարունակէ շատ փոքրիկ սեւ սերմեր: Կեղեւը կրնայ կարմիր կամ դեղին ըլլալ: Դեղինը ավելի թանկարժէք է, որովհետեւ դժուար կ'աճի: Կարմիրը ունի սպիտակ կամ կարմիր միջուկ: Կարմիր միջուկով միրգերը ավելի համեղ են:


ՔԱՐԱՅԾ

Քարայծր լեռնային վայրի այծի տեսակ է, որ կը պատկանի եղջերաւորներու խումբին, կը կոչուի նաեւ մօրուքաւոր այծ: Տարածուած է Ասիոյ, Իրանի, Յունաստանի եւ Հայաստանի անտառներուն մէջ, առաւելաբար անտառային գօտիի վերի սահմաններուն վրայ: Անոնք ամրան կը բարձրանան լեռան գագաթը:

Քարայծր Հայաստանի մէջ տարածուած է յատկապէս Խոսրովի անտառներուն մէջ եւ կ'ապրի հօտերով: Կը սնուի խոտաբոյսերով, թուփերով եւ տերեւներով:

Քարայծր կը կշռէ մօտաւորապէս 80 քկ., ունի 130 սմ. երկարութեամբ եղջիրներ: Բուրդը շիկագոյն է՝ մոխրագոյն երանգներով:

Ներկայիս քարայծերուն թուաքանակը Հայաստանի մէջ կը գնահատուի 1000-1500-ի միջեւ: Անոնք վտանգուած կենդանիներու շարքին մաս կը կազմեն: Վտանգման հիմնական պատճառներն են որսորդութիւնը, լեռնային արդիւնաբերութեան զարգացումն ու փայտահատութիւնը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Սոնա Թիթիզեան Կէտիկեան
Զեալոյացք՝ Լորի Խաչերեանի